Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 15 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի նորակառույց դպրոցի կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Գիշի գյուղի նորակառույց դպրոցի կահավորում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղի միջնակարգ դպրոցի լրացուցիչ կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի վերանորոգման» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի», Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող» և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագրերը.

«Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մանուկներին անվճար կրթություն» և «Երեխաների պաշտպանության միջազգային օր» ծրագրերը.

«Ողանջ» սոցիալ-իրավահոգեբանական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հագուստի տրամադրում կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը.

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի» ծրագիրը.

Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20110018 և «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20100435 ծրագրերը:

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի կոյուղու վերանորոգում» սոցիալական ծրագիրը:

«Սեր հայրենիքին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սեր հայրենիքին» 2011-2012թթ բարեգործական ծրագիր» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: